ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 Մայիսի 2017 թվականի N 52

ԱՐՏԱՇԵՍ ՌԱՖԱՅԵԼԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,13,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը,որ Արտաշես Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր 1-ին զանգված 2 թաղամաս թիվ 2 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արտաշես Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Ձորաղբյուր 1-ին զանգված 2 թաղամաս թիվ 2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=5.69քմ <<ինքնակամ այգետնակը>>, S=9.53քմ <<ինքնակամ բաց պատշգամբը>>, S=21.15քմ <<ինքնակամ ջրավազանը>> և 2 ինքնակամ բացված պատուհանները համարել օրինական, հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը :

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ ինքնակամ շինության օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Պարտավորեցնել նրան համայնքի բյուջե վճարելու ինքնակամ կառուցված 2 պատուհանների համար 5200 /հինգ հազար երկու հարյուր/ դրամ, որը պետք է փոխանցվի Աբովյանի ՏԳԲ 900105221213՝ ինքնակամ շինությունների պետ գրանցում, հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

30 Մայիսի 2017 թվականի N 53

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 2-րդ մասով, հիմք ընդունելով Ձորաղբյուր համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի N19 որոշումը և քաղաքացու դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վարդգես Նապոլեոնի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող, ծածկ.՝ 07-042-0401-0021, 1700քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածքին կից համայնքային սեփականություն հանդիսացող, ծածկ.՝ 07-042-0401-0022, 142.3քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածքն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով վաճառել նրան:

2. Պարտավորեցնել նրան 142.3քմ հողամասի համար համայնքի բյուջե վճարել 960 /ինը հարյուր վաթսուն/ դրամ գումար, որը պետք է փոխանցվի Աբովյանի ՏԳԲ-ի 900105221171՝ հողի օտարումից եկամուտներ, հաշվեհամարին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

30 Մայիսի 2017 թվականի N 54

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.,,Մեր Աշխարհ,, ՍՊԸ-ին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն 01.01.2017թվ.-31.12.2017թվ. ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՁՈՐՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 Մայիսի 2017 թվականի N 55

ԺԱՄԸ 24^{00}-Ի Հ ԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«Մեր Աշխարհ» ՍՊԸ-ին տալ ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվություն 01.01.2017թ.-31.12.2017թ.ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 Մայիսի 2017 թվականի N 56

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«Մեր Աշխարհը» ՍՊԸ-ին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 01.01.2017թ.-31.12.2017թվ ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 Մայիսի 2017 թվականի N 57
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քնարիկ Ռուբենի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 07-042-0410-0010 կադաստրային համարի հողակտորում տալ շինարարության թույլտվություն գյուղ. մթերքների վերամշակման արտադրամասի և տարածքի պարսպապատման շինարարական աշխատանքներ կատարելու համար:

2. Քնարիկ Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 07-042-0410-0010 կադաստրային համարի 1055քմ հողակտորից 500քմ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի՝ համաձայն կից ներկայացվող հատակագծի:

3. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4. Պարտավորեցնել Քնարիկ Կարապետյանին

1/շինարարության աշխատանքները սկսելու համար առնվազն 3 օրվա ընթացքում տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն թիվ 2-5 ձևի:

2/ Մուծելու սահմանված տեղական տուրքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
01 Հունիսի 2017 թվականի N 58

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝

Որոշում եմ

Ձորաղբյուր համայնքի 2017 թվականի բյուջեի միջնակարգ, մասնագիտական կրթություն ծրագրի 472900՝ այլ նպաստներ բյուջեից, հոդվածից, որպես անհատույց դրամական օգնություն ուսման վարձի դիմաց, հատկացնել՝

1/ Քրիստինե Մուշեղի Հայրապետյանին 60000 /վաթսուն հազար/ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ